

ՎՐԱՅ ԿԵՆՏՐՈՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեղարուստական գրուածքներ.—Ազգութեան հիմքը և ժամանակակից վրացուհին.—Մի կեղծիք և «վրացի-լուսաւորչականներ» հարցը.—Մի նոր բառարան կազմելու նախապատրաստութիւնները:

Վերջին երեք ամսուայ ընթացքում վրաց մամուլի էջերում երևացին մի քանի մանր գեղարուստական գրուածքներ: Մեր ընթերցողներին յայտնի տաղանդաւոր բանաստեղծ Վա-ժա-Փշաւելան տպագրեց «Յնորիս-Փուրցելի»-ում (№№ 2368 և 2370) մի պոէմա «Նոր տարին Փշաւում» և մի ոտանաւոր «Ասպետի գանգատը» վերնագիրներով: Դրանք երկուսն էլ վերցուած են լեռնականների կեանքից և կարդացւում են մեծ սիրով ու հաճոյքով: Պոէմայի մէջ նկարագրուած են մի այրի կնոջ նախապատրաստութիւնները նոր տարուն դիմաւորելու համար: Կաղանդի լուսաբացին, թանձր ձիւնը ճեղքելով, հիւր է գալիս անտղամարդ ընտանիքին այրիի տեղը, բերելով նը-րա երեխաների համար մեղր ու կաղին: Տեղը հրճուանքով խմում է իր հայրսի ձեռքով պատրաստած արաղը, տեղում են փոխադարձ սրտաբուխ բարեմաղթութիւններ և «քոյր» լինելու երդում տուած հարսը զգում է մի անհուն և սուրբ բերկրանք՝ տղամարդու շունչ տեսնելով իր օջաղում... Բախտաւոր է այ-ժմ այդ օջաղը, և «Աստծու աչքը պտտում է այնտեղ»...

Ոտանաւորի մէջ դուրս է բերում մի քաջ լեռնցու վիշտ— դանգատը: Նա իր ամբողջ կեանքը անց է կացրել ասպետա-բար, միշտ պատրաստ զոհուելու իր մերձաւորների համար: Այժմ նա ծերացել է, ոյժերը դաւաճանում են. ծերունի աս-պետին ամենքը մոռացել են. չկայ մինչև իսկ մէկը, որ խմե-լու ջուր հասցնի նրան... Նա յանձնում է իրան Աստծուն և դարսելով գլխի տակ իր պաշտելի թուրը, խանչալը, վահանն ու գլխարկը—աւանդում է հոգին...

Յունուարի 14-ին Վրաստանը կատարում է իր լուսա-ւորչունի կոյս Նինօի (Նունէի) տօնը: Ներկայ Թաւկանի տօ-նակատարութեան օրը երիտասարդ գրող պ. Մ. Դոբեշիա-ն

ապագրեց «Իվերայում» (№ 10) մի վերին աստիճանի գողտր-
րիկ ու ազդու ոտանաւոր: Հեղինակը համակուած է խորը վըշ-
տով, տեսնելով թէ ինչպէս չար խաւարը համարեա թէ հալա-
ծել է իր հայրենիքի լոյսը: Մարդիկ նորից կուռքեր են պաշտում
ու չոքում ոսկեայ բագնի առաջ... Հարկաւոր է մի նոր սուրբ
կոյս, որ ջարդովիշուր անէ այդ բագինը, փարատէ պատած
խաւարը և ուսուցանէ վրացիներին ճշմարտութիւնը...

Արձակ պատմութեան ժանրի մենք կը յիշատակենք այստեղ օր.
Ծինօ Մակաշիծէի «Ծնունդը» և պ. Մ. Աղամաշվիլու «Ձան-
չուրը»: Այդ երկու հեղինակն էլ սկսնակներ են, մի քանի ա-
միս առաջ միայն գրական ասպարէզ իջած, բայց երկուսին էլ
համահաւասար կերպով յաջողուել է դարձնելու իրանց վրայ
ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը: Աղամաշվիլին
սկսեց իր գործունէութիւնը նախ մի քանի ընտիր ոտանաւոր-
ներով, որոնց միջից մեզ շատ հաւանելի երևեցաւ մանաւանդ
«Ծնորդի ալիքներում» կոչուածը՝ իր երկներանգ ու պայծառ
տեսարաններով: Հէնց իր անդրանիկ «Ձանչուր» պատմութեանը
(«Ծնորիս-Փուրցելի», № 2325 և 2331—յաւելուած) նա ապա-
ցուցեց, որ յանձին նրա վրացի կարգացողը կ'ունենայ ապա-
գայում միաժամանակ և մի տաղանդաւոր պատմող-նովելիստ:
Ձանչուրը մի իդիոտ և մարմնով անզարգացած երիտասարդ
է: Տարիներով նա թափառում է շուկայում և «ջիգար» (թոք
և լեարդ) մուրում կամ գողանում մսավաճառներէ: Գողու-
թեան համար վերջինները նրան անգութ կերպով զանակոծում
են: Շուկայի պարապ պատանիները շահագործում են Ձանչու-
րին՝ ճաշից յետոնները պարապ մսագործների ու խանութպան-
ների համար «ցիրկ» սարքելով ու իրանց օգտին կողէկներ
ժողովելով: Այդտեղ տանջում են նրան՝ պար ածելով, շների
հետ կուսցնելով և անդադար գլխին տալով... «ցիրկը» տեղի
է ունենում, իհարկէ, շուկայի մէջ տեղում: Երբ նա յաջող չի
«ներկայացնում», ընկնում են նրա յետևից ու ծեծելով փախցը-
նում: Յաջորդ օրը նրան նորից կարելի է տեսնել մսագործնե-
րից շիգար մուրալիս կամ գողանալիս...

Պատմութեանը զարթեցնում է ընթերցողի մէջ, չնայելով
անմիտ ամբօրի անվերջ հռոցներին, խորը կարեկցութիւն
դէպի թշուառ, մարդկային արժանապատուութիւնը կորցրած ի-
դիոտը...

«Ծնունդ»-ի («Ծնորիս-Փուրցելի» № 2363—յաւելուած)
հեղինակ Նինօ Նակաշիձէն շատ լաւ է ուսումնասիրել Գուրիա-
յի կեանքը և բաւականաչափ տեղ է տալիս իր պատմութեան
ընդամենը իր հերոսների հոգեբանութեանը: Ծերունի Ռոստոմը

պատրաստում է իր կնոջ հետ Յիսուսի ծննդեանը դիմաւորելու ոչ միայն խոզի ճուտեր մորթելով, այլև հոգեպէս մաքրելով։ Նա մեծ պատկառանքով հանում է սնդուկից տասնեակ շորերի մէջ փաթաթուած Աւետարանը և կարդում նրան երգի ձայնով և ամբողջ իրանը օրօրելով... Նա անում է այդ միայն տէրունական մեծ տօների նախորդ օրերին և զգում իւրան անասելի երջանիկ մարդ այդ ըոպէներին... Այս անգամ էլ, ծննդի նախընթաց օրը, Ռոստոմն ու իր կին Մարթան չափազանց երջանիկ են, որ մի անգամ էլ իրանց կեանքում արժանացան Աւետարանի ընթերցմանը, բայց մի թախիծ կրծում է նրանց վեհ զգացումներով լի սրտերը։ Նրանց չքնաղ, 16-ամեայ Կեկուցա աղջիկը դեղերում է օտարութեան մէջ աղախնի պաշտօնով, որպէսզի ծնողներին լաւ ապրելու միջոցներ ուղարկի... Դեռ ևս անցեալ տարի ծնողները վճռեցին յետ կանչել Բաթումից այդ հրեշտականման աղջկան, բայց նա չեկաւ, որպէսզի իր մի քանի ամսուայ ուռճիկով իրանց մեծ քրոջ համար բաժինքի փող ուղարկի... Մինչդեռ գիւղումը ճարուած է արդէն Կեկուցայի համար մի ընտիր փեսացու, և մարդ ու կին վճռում են, որ մի քանի օրից յետոյ Ռոստոմը գնայ Բաթում աղջկանը բերելու։ Այդ խօսակցութեան միջոցին, երեկոյեան, գիւղ է ժամանում (երկաթուղիով) յանկարծ ինքը Կեկուցան... Ծնողներն զգում են իրանց եօթներորդ երկնքում, համբոյրներին ու փայփայանքներին վերջ չկայ... Լուսաբացին Ռոստոմը գնում է եկեղեցի և ժամերգութիւնից վերջը հետը բերում տուն փեսացուն ու նրա ծնողներին։ Ծերունի հայրը զուարճախօսելով ու երգելով ներս է մտնում հիւրասենեակը իր խնամիններով հէնց այն ըոպէին, երբ նրա պաշտելի Կեկուցան մի սիրուն տղայ էր ծնել և անկողնի մէջ ուժաթափ վայր ընկել...

Այդպիսով Բաթումը, որ մի տեսակ երջանկութեան աղբիւր էր դարձել 5 տարի շարունակ ծերունի ծնողների համար, դառնում է այժմ մանկամարդ Կեկուցայի և նրա ծնողների խղճի մշտական խայթոցի ու դժբախտութեան պատճառ...

Ուշադրութեան արժանի է, որ կանայք զգալի դեր են կատարում այժմ վրաց գեղարուեստական գրականութեան մէջ։ Այսպէս վիպագրութեան մէջ լաւ անուն ունեն Ծ. Դաբաշվիլին և Ն. Նակաշիձէն, բանաստեղծութեան մէջ—Դանդեգելին (կեղծ անուն է) և Նինո Օրբելեանին, դրամատուրգիայի մէջ—Օրբորդ Ազեանը (ազգով հայ)։ Կան դարձեալ մի խումբ ուրիշ կանայք, որոնք գրում են երբեմն թէ ոտանաւոր և թէ պատկերներ։ Դէպքից օգտուելով, կարող ենք այստեղ յիշա-

տակել նաև մանկական գրող տիկին Անաստ. Ժերեթելուն (ազգով հայ, ծնունդ օրինորդ Թումանեան), որի հրատարակած «Ջեջիլի» (Արտ) մանկական ամսագիրը և նրա յաշկուած «Կվալի» (Աղօս, հետք) շաբաթաթերթը մօտեւս ընդ միշտ դադարեցուեցան կառավարութեան կարգադրութեամբ:

Յունուար ամսին վրաց թատրոնական ընկերտուարն էլ հարստացաւ երկու նոր պիեսաներով. ներկայացուեցան Ակակի Ծերեթելու «Լուսաբաց» և օրինորդ Ագեանի «Ինժեներ փեսան» նոր կոմեդիաները, բայց երկուսն էլ, դժբախտաբար, անաշող գրուածներ դուրս եկան: Դրանց հեղինակները, հաւանականօրէն, նորից կը մշակեն այդ նիւթերը:

Նորերս լոյս տեսաւ վրաց յայտնի մանկավարժ պ. Նա-կոր Գոգերաշվիլիի նոր գրքոյկը «Ազգութեան հիմքը» վերնագրով: Գրքոյկը, որ բաղկացած է 64 միջադիր երեսից, կազմուած է հասարակ ժողովրդի ընթերցանութեան համար:

Ասէնք նախ մի-երկու խօսք գրքոյկի հեղինակի մասին:

Աշխարհիս երեսին շատ քիչ կը պատահի պ. Գոգերաշվիլիի պէս բախտաւոր մանկավարժ-գրող. նրա կազմած դասագրքերը այն միակ աղբիւրն են, որից մայրենի լեզու են սովորում բոլոր վրացի երեխաները... Այդ պատճառով զարմանալի չի լինի ընթերցողի համար լսել, որ նրա միայն մի դասագիրքը՝ «Մայրենի լեզու» անունով տպագրուել է մինչև օրս 314 հազար հատ... Այդ մի տարուայ դասընթացք միայն պարունակող ձեռնարկին հետևում են յաջորդ տարիներում նոյն հեղինակի «Բնութեան դուռը» և «Կոկոն» դասագրքերը, որոնք հրատարակուել են մի քանի տասնեակ հազարներով: Լաւ ընդունելութիւն են գտել նոյնպէս՝ թէ ուսումնարաններում և թէ ընտանիքներում՝ նրա գրուածների ժողովածուները՝ «Փունջ», «Մարգարտափունջ» և «Ջահ» վերնագիրներով: Այնուհետև գալիս են այդ բեղմնաւոր հեղինակի կազմած մի շարք այլ գրքոյկներ ժողովրդի և մանուկների տնային ընթերցանութեան համար, որոնք դարձեալ վաստակած ունեն ընթերցողների մեծ ծաւալ: Այդպէս, օրինակ, «Անձուրաց վրացիք» տպագրուած է 8600 հատ, «Թէ ինչ արեց նանիկը»—7200, «Էրէկլէ թագաւորն ու Ինգիլօ աղջիկը»—6000, «Ասպինձի պատերազմը» (Վըրաստանում)—դարձեալ 6000 հատ և այլն...

Այսպիսով մենք տեսնում ենք, որ պ. Գոգերաշվիլու գրքչի արդիւնքները հեաաքքրում են իր հայրենակիցներին, և նա անպայման կերպով սիրելի է նրանց:

Նրա աշխատասիրած նոր արտադրութիւնը — «Ազգութեան հիմքը» — մի հանրամատչելի վառվռուն քարոզ է մայրենի լեզուի նշանակութեան մասին՝ ազգութիւնը պահպանելու հարցում: Հեղինակը մեծ գովեստով է խօսում վրաց լեզուի «քաղցրութեան», ճկունութեան ու ճոխութեան մասին, վկայութիւններ բերում ուս և եւրոպացի նշանաւոր գրողներից մայրենի լեզուի անհրաժեշտ կարևորութեան մասին և կծու յանդիմանութիւններ կարդում վրաց ազգի այն որոշ դասակարգերին, որոնք արհամարհանքով են վերաբերում մայրենի լեզուին և հալածում են նրան իրանց ընտանիքներից: Նա տալիս է մինչև իսկ մի շարք գործնական խրատներ վրացի ընտանիքում մայրենի լեզուի գիտութիւնը միշտ անշէջ պահելու համար: Փորձառու և ժողովրդասէր հեղինակի այդ խրատներից մի առանձին սրտառու է տպաւորութիւն է թողնում մանաւանդ նրա այն խորհուրդը, որ վրացի ընտանիքները սովորութիւն չինեն իրանց համար հաւաքելու երեկոները իրանց յարկի տակ մի քանի ծանօթ-բարեկամներ և միասին կարդալու նրանց հետ վրացերէն գրքեր ու լրագիրներ և վարժուելու վրացերէն խօսելու ու դատելու մէջ...

«Ազգութեան հիմքը» հեղինակի վերոյիշեալ յանդիմանութիւններից մի խոշոր բաժին է ընկնում նաև վրացի «ուսեալ» կանանց: Պ. Գոգեբաշվիլու սուր դիտողութիւնը և բազմամեայ փորձառութիւնը շատ ցաւալի կարծիք է գոյացրել նրա մէջ ժամանակակից կրթութեամբ վրացի օրիորդների և տիւիւնների մասին: «Ոչ մի տեղ, — ասում է նա խորին վշտով — կրթութեամբ կանայք այնպիսի ստոր մակերևոյթի վրայ չեն կանգնած, ինչպէս մեզանում: Անկեղծ որ խոստովանուենք, մեր ամբողջ ուսեալ օրիորդների և տիւիւնների դասը ներկայացնում է՝ բացառութեամբ մի տասը հոգու՝ թեթեւագլուխ էակների մի գունդ, որոնք զուրկ են մարդկային առողջ դատողութիւնից, բարձր ձգտումներից և հաստատ ընաւորութիւնից: Այժմեան վրացուհին չէ կարող նոյնիսկ ստուեր համարուել այն նախկին վրացի կնոջ, որ ներկայացնում էր մի հաստատուն, չափած-ձեւած և խիստ յարգելի տիպ և որ կրթւում ու կազմակերպւում էր ազգային հոյի վրայ: Ուսեալ վրացուհին կարող է ստոր համարուել նոյնիսկ այժմեան հասարակ կարգի վրացի կնոջից, որ իր շրջանում մի ոյժ է և ոչ անուժութիւն, ինչպէս առաջինը»...

Նոյնպիսի խստութեամբ է դատում մանկավարժ-հրապարակախօս պ. Շակոբ Գոգեբաշվիլին նաև վրաց հասարակութեան մի քանի ուրիշ դասակարգերին...

«Իվերիա»-ի № 12-ում տպուած է ոմն Լասի-ի «Վրաց հայացնելը» անունով մի յօդուած, որ կատարելապէս ապշեցնում է մարդուն իր անհեթեթ դատողութիւններով: Յօդուածագիրը նախ և առաջ օգտուում է ներկայ 1904 տարւայ պաշտօնական «Кавказский календарь»-ի տուած տեղեկութիւններով: Հաշից դուրս է գալիս, որ հայոց Անդրկովկասի 4 հոգևոր սեմինարիաներում (Թիֆլիսի, Երևանի, Էջմիածնի, Շուշու) և Գէորգեան ճեմարանում ուսանում էին մինչև այս յունուարի մէկը 1858 աշակերտ. Անդրկովկասի հայ-լուսաւորչականների թիւը հասնում է 1,100,138 հոգու, իսկ ուղղափառներինը — 1,683,658-ի. այդ ուղղափառների համար գոյութիւն ունեն 2 հոգևոր սեմինարիա՝ Թիֆլիսում և Գուլթայիսում. վերջապէս միայն Թիֆլիսի ու Գուլթայիսի նահանգներում ապրում են 242,180 հայ-լուսաւորչական, «որոնց երկու երրորդը ($\frac{2}{3}$) մասից աւելին—մեր յօդուածագրի համոզումով—զուտ վրացի են ծագումով»:

Չանց անհնչ պ. Լասիին մեծ մխիթարութիւն պատճառող այդ «համոզումը». մեր ընթերցողներին շատ լաւ յայտնի են «Իվերիայի» մի խումբ աշխատակիցների նմանօրինակ էժան համոզումները: Յօդուածագիրը բոլորովին մոռանալով իր ձեռքով բերած պաշտօնական թւանշանները՝ գալիս է յանկարծ այսպիսի մի ապշեցնող եզրակացութեան. «պարզ է, որ մի այդպիսի փոքր հօտի համար, ինչպիսին են 242,180 հոգին, չափազանց շատ պէտք է համարել 5 դպրոցը իր 1858 աշակերտներով: Այդտեղից պէտք է հանենք այն եզրակացութիւնը, որ եթէ հայ-լուսաւորչականների այդ փոքր հօտին հարկաւոր չեն այդչափ բազմաթիւ հոգևոր գործիչներ, ապա ուրեմն հայ հոգևորականութիւնը ձգտում է տարածել դրանով ժողովրդի մէջ ընդհանուր լուսաւորութիւն և դրա հետ միաժամանակ առաջ տանել մեծ յաջողութեամբ վրաց հայացնելու գործը, մի բան, որ հաստատուում է եկեղեցուց և ուսումնարանից վրաց լեզուի հալածութեամբ՝ հայ հոգևորականութեան ձեռքով»...

Ահա այսպէս են քամու ջաղաց շինում, ընթերցող, և անբարեխիղճ կերպով մոլորեցնում միամիտ, իրանց կարդացածին քննական աչքով չվերաբերուող ընթերցողներին... Չէ՞ որ պ. Լասին պաշտօնական տեղեկութիւններ էր քաղում «Կովկասի օրացոյցից». այդ տեղեկութիւնները մեզ ասում էին, որ հայոց 4 սեմինարիաները հոգևոր գործողներ են պատրաստում ամբողջ Անդրկովկասի 1,100,138 *) և ոչ թէ Թիֆլիսի ու Գուլթայիսի նահանգի 242,180 հայի համար... Հապա թր դպրոցնե-

քրն են քահանայ պատրաստում Երևանի, Գանձակի, Կարսի և Քաղուի նահանգների հայ-լուսաւորչականների համար...

Ի՞նչ է այդ, ծայրայեղ անուշադրութիւն, թէ մի անգուպ, կոյր մարդատեցութիւն...

Յօդուածագիրն այնուհետեւ ցանկութիւն է յայտնում, որ Վառաձարութիւնը պաշտօնապէս ճանաչի «վրացի-լուսաւորչականների» համայնքի գոյութիւնը: Դրանով, նրա ասելով, նախ և առաջ կը ջլատուեն հայ հոգևորականութեան ձգտումները և վրացիք «կ'ազատուեն հայանալու վտանգից» և ապա՝ տեղիս ուղղափառ հոգևորականութեանը շատ հեշտութեամբ կը յաջողուի այնուհետև հայ-լուսաւորչական-վրացիներին: Նորից յուշադաւան եկեղեցու ծոցը դարձնելու: «Միթէ այլեւս կասկած կարող է լինել,—բացադանչում է պ. Լասին—որ Երևանի նահանգի մի քանի գիւղերի հարազատ հայ բնակիչների ուղղափառ եկեղեցուն միանալուց յետոյ՝ վրացի-լուսաւորչականները՝ լինելով աւելի պակաս մոլեռանդ՝ շատ աւելի հաճութեամբ վճռողունն յունադաւանութիւն»: Ինչը Ս. Գրիգոր Լուսաւորիչն էլ, մեր յօդուածագրի ասելով, եղել է ուղղափառ և ոչ մի քրիստոնեայ դաւանութիւն այնքան մօտիկ չէ ուղղափառ եկեղեցուն, որչափ հայ-լուսաւորչական եկեղեցու վարդապետութիւնը...

Եւ պ. Լասին վերջացնում է իր յօդուածը լի հաւատով, թէ իր առաջարկութիւնը՝ չափից դուրս հեշտ իրադրօծելութան է...

Ամեն մարդ ազատ է իր յոյս ու հաւատով ապրելու, միայն պէտք է չմոռանալ, որ փաստեր կեղծելը առնուազն ամօթ է...

Վրացերէն մի նոր, լիակատար բառարան կազմելու հարցը նորից հանդէս է եկել մեր հարեանների մամուլի էջերում: Արանից երեք տարի առաջ երիտասարդ գրող Լ. Աղնիաշվիլին դիմում արեց գաւառական ինտելլիգենցիային և մասնաւորապէս ուսուցիչներին, որ նեղութիւն կրեն հաւաքելու գաւառներում գործ ածուող այնպիսի վրացերէն բառեր, որոնք բաւարաններում չկան: Այդ կոչը ապարդիւն չանցաւ. գտնուե-

*) Վերջին տեղեկութիւնների համեմատ 1,243,000. տես «Մուրճ» № 1:

ցին մարդիկ, որոնք բաւականաչափ բառեր ուղարկեցին ԹԷ իրան առաջարկողին և ԹԷ վրացի լրագիրներին: Բայց շուտով նոր բառարանի մշակելովը զբաղուած Աղնիաշվիլին անբուժելի հիւանդութիւն (հոգեկան) ստացաւ, և գործը բոլորովին կանգ առաւ: Ներկայ 1904 թւի յունուար ամսին «Իվերիայ» էջերում մի վիճաբանութիւն սկսուեց վրաց զբաղանութեան մէջ օտար բառեր (եւրոպական) գործածելու մասին: Ոմանք առաջարկում էին թողնել բոլորովին այդ սովորութիւնը և ամեն կերպ աշխատել մայրենի լեզուի բառերի օգնութեանը դիմել: միւսները, որոնց մէջն էր նաև լրագրի խմբագրութիւնը, ասում էին, որ օտար բառերի գործածութիւնը ոչինչ Պետա չի տայ, միայն թէ պէտք է աշխատել այդ բառերի գործածութիւնը համակերպել ըստ ամենայնի վրաց լեզուի քերականական կանոններին: Այդ վիճաբանութիւնը առիթ բռնելով, հանդէս եկաւ «Իվերիա», № 35) ոմն Վ. Կ. իր շատ օգտակար և գործնական մի առաջարկութեամբ: Դա վերանորոգում է Աղնիաշվիլու առաջարկութիւնը, միայն այն յաւելուածով, որ վարձատրութիւն է խոստանում բոլոր աշխատակիցներին: Նա վարձ է նշանակում ամեն մի ուղարկուած նոր բառի համար հինգ կոպէկ: «Ճշմարիտ է, քիչ է այս վարձատրութիւնը,—ասում է նա քաշուելով—բայց պէտք է չմոռնալ, որ շատերը հեշտութեամբ կարող են շաբաթական հարիւրից մինչև 200 բառ գտնել»: Նա ցանկութիւն է յայտնում, որ ներկայ 1904 թւին բառեր ուղարկուեն առաւելապէս արևելեան վրաստանից, իսկ եկող 1905-ին—արևմտեանից (Իմերեթից, Գուրիայից, Մինգրելիայից): Երկու տարուց յետոյ արդէն, պ. Վ. Կ.-ի կարծիքով կարելի է ձեռք զարկել նոր բառարան կազմելուն: Գործը տանելու համար պէտք եղած բոլոր ծախսերը նա յանձն է առնում հոգալու իր միջոցներից: Այդ գործնական մարդը և մեկենասը հրապարակով խնդրում է երեք յայտնի վրացագէտներին ընդունելու բառարանական մասնաժողովի անդամութեան պաշտօնը: Այդ երեք ընտրեալներն են՝ Դ. Կարիճաշվիլի, Դր. Ղիփշիճէ («Իվերիայ»-ի այժմեան խմբագիրը) և Գ. Դիասա-միճէ:

Աչքի առաջ ունենալով «Իվերիայ»-ի լուռ համաձայնութիւնը՝ պէտք է ընդունել, որ գործը հաստատ հողի վրայ է դրուած:

Մի փոքր նկատողութիւն էլ:

Վրաց լեզուի ամենամեծ բառարանը (վրացերէն-ռուսերէն) կազմել է մօտ 40 տարի առաջ հանգուցեալ պրոֆ. Դ. Զուբինովը: Դա բաղկացած է մօտ 2000 մեծագիր, մանրատառ

Ա երկսիւն էջերից: Այդտեղ վրացի գիտնականը մի քանի հա-
բիւր բառի կողքին փակագծերում ծանուցանում է, որ նրանք
հայկական ծագում ունեն: Պ. Վ. Կ. «մեծ յանցանք» է համա-
բում «օրհնած Չուբինաշվիլու» այդ վարմունքը: Նա կարծում
է, որ պրոֆեսսորը օգտուել է ուղղակի, առանց մեծ նեղու-
թիւն կրելու, հայոց պատրաստ մեծ բառարանից (Հայկազեան),
զոհ դառնալով իր ժամանակի սխալ հայեացքին՝ հայոց լեզուի
խաղացած դերի մասին...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ